ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստ

ք. Երևան 09 հունիսի 2018թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ. Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի գնահատում:

2.1 N 21 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն, սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին են ներկայացրել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ Հրավերի տեքստի հավելված N 6 և 6.1: Ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի տեքստով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով 2.1 կետը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. N 14 և 21-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին ճանաչել **ընտրված մասնակից**:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

3.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	_____	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	_____	Թ. Զաքարյան
	_____	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Ա. Իսկանդարյան
	_____	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Լ.Բաղդասարյան